

ԺԱՄԱՆԱԿԱՆԻՇ ԲԱՌԵՐԻ ԵՎ ՏԱՐՎԱ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ
ՄԱԿՐՈՅԻՆ ԱՐԺԵՔՆ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ՀՏԴ 809.198.1

Սիրումյան Մարգուշ

*Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ,
մանկավարժական գիտությունների թեկնածու
Երևան, Հայաստանի Հանրապետություն
mirumyan1951@mail.ru*

Հոդվածում վեր է հանվում ժամանականիշ բառերի մակդրային արժեքն արդի հայերենում, որ դիտարկվում է օրվա ժամանակային հատույթների և տարվա եղանակների անվանումների փոխաբերական նշանակությունների քննության համատեքստում: Ժամանականիշ բառերի փոխաբերական-մակդրային իմաստները դիտարկվում են առավոտ-իրիկուն հենակետային միավորների և նրանց հոմանշային շարքերի քննության համատեքստում, իսկ տարվա եղանակների անվանումների փոխաբերական իմաստները (ամառ, ծմեռ, աշուն, գարուն)՝ օրվա ժամանակային հատվածների հետ ունեցած իմաստային հարաբերակցության շրջանակներում:

Բանալի բառեր՝ թեմատիկ խումբ, ժամանականիշ բառեր, փոխաբերական նշանակություն, արշալույս, մայրամուտ, կյանք, տարվա եղանակներ, զուգորդելիություն:

Ներածություն

Ժամանականիշ բառերը (օրվա հատույթների անվանումները) փոխաբերական կիրառությամբ մակդրային արժեք են ստանում **կյանք** բառի հետ ունեցած զուգորդություններում՝ փոխաբերական իմաստները մասնավորելով մարդու կյանքի տարբեր շրջանները բնութագրող հատվածների վրա, ինչպես՝ **կյանքի առավոտ** - «կյանքի առաջին՝ մատաղ շրջանը. պատանեկություն», **կյանքի արշալույս** - «մարդու կյանքի սկզբնական շրջանը, մանկություն», **կյանքի իրիկուն** - «մարդու կյանքի ծերության շրջանը», **կյանքի վերջալույս** - «կյանքի կամ որևէ երևույթի վերջին շրջանը» և այլն:

Նմանապես՝ դիտարկվում են տարվա եղանակների փոխաբերական-մակդրային իմաստները **կյանք** բառի հետ զուգորդելիության շրջանակներում, ինչպես՝ **կյանքի գարուն** - «մարդու կյանքի երիտասարդական շրջանը, երիտասարդություն», **կյանքի ծմեռ** - «ծերություն, մարդու կյանքի վերջին շրջանը» և այլն:

Բովանդակություն

Լեզվի բառային կազմի մեջ մտնող միավորները, ըստ իրենց նշանակությունների մերձավորության աստիճանի, դասդասվում են տարբեր իմաստային խմբերի մեջ, որոնք բառային մակարդակում առանձնանում են որպես առանձին թեմատիկ խմբեր: Լեզվի իմաստային-թեմատիկ խմբերից են՝ ֆիզիկական աշխարհ, մարդկություն (սեռ, տարիք, ընտանեկան հարաբերություններ), կենդանիներ, սնունդ և ըմպելիք, հագուստ, բնակարան, երկրագործություն, ֆիզիկական գործողություններ, տարածական

հարաբերություններ, ժամանակ, զգացմունք, մտածողություն, ռազմական գործ, օրենք և այլն¹:

Օրվա շրջափուլի հատվածներին և տարվա եղանակների պարբերություններին առնչվող լեզվական միավորները կազմում են ժամանակի իմաստային-թեմատիկ խումբը, որ արտացոլում է մարդկանց գիտելիքն ու պատկերացումները դրանց վերաբերյալ:

Գ. Զահուկյանը արմատական գոյականների իմաստաբանությունը քննելիս առանձնացնում է «ժամանակի արտահայտություն» իմաստային խումբը, որի մեջ մտնող բառային միավորներն արտահայտում են «արևի ու լուսնի և եղանակի փոփոխությունների պարբերականությունն ու տևողությունը», որ մարդիկ վաղուց օգտագործել են համապատասխան ժամանակային գաղափարներ արտահայտելու համար: Ըստ նրա՝ մի շարք գոյականներ (նաև՝ արմատական) արտահայտում են ոչ միայն բնական մարմինների շարժման փուլեր, այլև՝ ժամանակային գաղափարներ, ինչպես, օրինակ՝ **այգ, ամ, ամիս, ամառ, աշուն, առավոտ, արշալույս, գարուն, գիշեր, դար, երեկո, ծագ, ծնեռ, տիվ, ցայգ, ցերեկ, օր**²:

Այս կարգի բառերը, ինչպես նաև ժամանակի տևողության չափերի պայմանական անվանումները՝ **րոպե, վայրկյան**, մյուս կողմից՝ որոշակի երևույթների (տոների) ժամանակային նշանակումները՝ **զատիկ, նավակատիք**, ամիսների (հունվար, փետրվար. . .) և շաբաթվա օրերի անվանումները (երկուշաբթի, երեքշաբթի. . .) մտնում են ընդհանուր բառիմաստային խմբի մեջ, որ կոչվում է **ժամանակի իմաստային թեմատիկ խումբ**:

Ժամանակի իմաստային-թեմատիկ խմբի մեջ մտնող լեզվական միավորներ, ինչպես նշեցինք, արտացոլում են մարդկանց գիտելիքն ու պատկերացումները դրանց վերաբերյալ, մյուս կողմից՝ արտահայտում են նրանց տարբեր ընկալումները՝ պայմանավորված մշակութային առանձնահատկություններով: Տրոհման առաջին աստիճանում հիմք է ընդունվում **խավարի և լույսի հակադրությունը**, ըստ որի առանձնացվում են օրվա շրջափուլերի՝ հետևյալ հիմնական հատվածները՝ **գիշեր և ցերեկ, առավոտ և երեկ**³:

Բառական իմաստներով պայմանավորված՝ այդ բառերից յուրաքանչյուրը ժամանակի որոշակի հատված է մատնանշում. **գիշերը** ցույց է տալիս «օրվա մի մասը՝ մայրամուտից մինչև լուսաբաց», **ցերեկը**՝ «օրվա մի մասը՝ արևածագից մինչև մայրամուտ, առավոտից մինչև երեկո», **առավոտը**՝ «ցերեկվա սկիզբը, արևածագի՝ արևագալի ժամանակը», **երեկոն**՝ «օրվա վերջին մասը՝ արևամուտից մինչև կեսգիշեր»:

Այդ բառերը, բուն նշանակություններից բացի, ունեն նաև խորհրդանշական արժեքներ, որոնք պայմանավորված են նրանց փոխաբերական իմաստներով, որոնց հիմքում ընկած են մարդու զգայական ընկալումները:

Բառերի փոխաբերական նշանակությունը հենվում է համեմատության վրա՝ հակադրելով նոր առարկան կամ նրա հատկանիշը արդեն հայտնի առարկային կամ նրա հատկանիշին: Փոխաբերությունը կապված է մարդու գիտակցական գործունեության, պատկերավոր մտածողության հետ և ձգտում է համակողմանիորեն բնութագրել ա-

¹ Իմաստային-թեմատիկ խմբերի մասին տես Գ. Զահուկյան, 1987, 204 - 222:

² Գ. Զահուկյան, 1989, 133:

³ Հմմտ. Ն. Հեքեքյան, 2017, 229-246:

ռարկան կամ նրա հատկանիշը¹: Մյուս կողմից՝ բառերի փոխաբերական նշանակությունները պայմանավորված են նրանց խորհրդապաշտական իմաստներով, որոնք ժամանակի ընթացքում ամրակայվում են մարդկային գիտակցության մեջ և արտահայտվում կենդանի խոսքում: Փոխաբերական իմաստները բառայինից մակաբերված իմաստավորումներ են, որոնք, որպես այդպիսին, արժևորվում են շարահյուսական կիրառության մեջ. այլ կերպ ասած՝ բառերի փոխաբերական իմաստներն ի հայտ են գալիս գործառական ոլորտում: Շարահյուսական ձևով կատարվող սահմանափակումներից դուրս այդ բառերը փոխաբերական իմաստներ չեն արտահայտում, իսկ եթե բառարաններն արձանագրում են այս կամ այն բառի փոխաբերական իմաստը կամ իմաստները, ապա դա արվում է ավանդույթի ուժով՝ ելնելով այն հանգամանքից, որ այդ իմաստները (փոխաբերական) ժամանակի ընթացքում կայունացել են տվյալ բառի իմաստային կառուցվածքում (և լեզվակիր հանրության գիտակցության մեջ):

Ըստ այդմ ժամանականիշ բառերը (կամ դրանց հոմանշային շարքերը), որպես օրվա տարբեր հատույթների կամ ժամանակային կտրվածքների լեզվական անվանումներ, մարդկային գիտակցության մեջ վերաարժևորվել են որպես մարդկային կյանքի կամ որևէ բանի «սկզբի» և «ավարտի» հասկացություններ՝ համապատասխան իմաստներով արտահայտելով փոխաբերական-մակդրային նշանակություններ:

Ինչպես նշեցինք, իրենց ուղղակի (բուն) իմաստներից բացի՝ ժամանականիշ այդ բառերը կարող են հանդես գալ նաև փոխաբերական նշանակություններով, որ պայմանավորված է ինչպես նրանց իմաստների ծավալային ընդգրկումով, այնպես էլ կապակցելիական հնարավորություններով: Մյուս կողմից՝ փոխաբերական իմաստները պայմանավորված են լինում առարկաների հատկանշային, զգացական և խորհրդանշային արժեքներով²:

Ընդ որում **գիշեր** // **երեկո** և **առավոտ** // **ցերեկ** բառազույգերն ունեն համեմատաբար մերձավոր փոխաբերական նշանակություններ, որոնք պայմանավորված են մարդկանց հոգեկան աշխարհի վրա այդ բառերի արտահայտած ժամանակային պահերի տպավորություններով: Հմնտ.

Գիշեր – հատկանշային արժեքով արտահայտում է «մռայլություն, խորհրդա վորություն», զգացական արժեքով՝ «վախ, սարսափ, անհանգստություն», խորհրդանշային արժեքով՝ «զառամություն, մահ, վախճան»:

Երեկո - հատկանշային արժեքով՝ «ավարտ, վերջ», զգացական արժեքով՝ «թախիծ, վիշտ, տխրություն», խորհրդանշային արժեքով՝ «ծերության հասակ»:

Ցերեկ – հատկանշային արժեքով՝ «պարզություն, պայծառություն», զգացական արժեքով՝ «ուրախություն, հույս, լավատեսություն», խորհրդանշային արժեքով՝ «երիտասարդություն»:

Առավոտ - հատկանշային արժեքով՝ «ծնունդ, զգացական արժեքով՝ «նոր՝ երջանիկ կյանքի սկիզբ», խորհրդանշային արժեքով՝ «նոր զարգացման շրջան» և այլն:

Ժամանակային կտրվածքների այս անվանումները փոխաբերական իմաստներով տարբեր աստիճանի զուգորդումներ ունեն կամ, կարելի է ասել, կապակցելիական տարբեր հնարավորություններ են ցուցաբերում:

¹ Стариченко В. Д., 2008, 305.

² Ժամանականիշ բառերի խորհրդանշական արժեքների մասին տե՛ս Ն. Հեքեքյան, 2017:

Սույն հոդվածում մենք կանդրադառնանք «առավոտ» և «մայրամուտ»¹ անվանումների բառային ծավալումներին, տարվա եղանակներին ու նրանց փոխաբերական նշանակություններին՝ դրանք դիտարկելով այլ բառի նկատմամբ դրսևորած զուգորդումների համատեքստում:

Առավոտ և **մայրամուտ** բառերը, որպես հենակետային բառեր կամ չեզոք անդամներ, կազմում են հոմանշային շարքեր, որոնց անդամները «իմաստների ձգողության» օրենքով դարձյալ ձեռք են բերում համապատասխան փոխաբերական իմաստներ:

Նախ ներկայացնենք հենակետային (չեզոք) բառերի կազմած հոմանշային շարքերն ու նրանց փոխաբերական իմաստները.

Առավոտ - «կյանքի առաջին՝ մատաղ շրջանը. պատանեկություն», – **արշալույս** «լավ ու նշանավոր բանի սկիզբ. ծնունդ», **այգ** - «սկիզբ», **այգաբաց** - «նշանավոր իրադարձության սկիզբ», **լուսաբաց** - «ազատության՝ երջանիկ կյանքի՝ լավ ապագայի սկիզբ»:

Մայրամուտ - «վախճան, գոյության վերջին շրջանը», **իրիկուն** - «մարդու կյանքի ծերության շրջանը», **վերջալույս** - «կյանքի կամ որևէ երևույթի վերջին շրջանը», **արևամուտ** - «կյանքի գոյության վերջին շրջանը» և այլն:

Փոխաբերական նշանակությունների շրջանակներում «առավոտ»-ը և շարքի մյուս անդամները կապվում են «նոր բանի սկզբի», «իրիկուն»-ը և մյուս անդամները՝ «մի բանի ավարտի կամ վախճանի» ըմբռնումների հետ: Փոխաբերական իմաստներով գործառնապես կենսունակ են «**արշալույս**» և «**վերջալույս**» անդամներն ու նրանց առնչակից միավորները, ինչպես՝

կյանքի արշալույս - «մարդու կյանքի սկզբնական շրջանը, մանկություն», **դպրության արշալույս** - «որևէ ազգի գիր ու գրականության սկզբնավորման շրջանը», **ասպետական դարաշրջանի արշալույս** - «միջնադար. ասպետական դարաշրջանի սկզբնավորման շրջանը», **տիեզերական դարաշրջանի արշալույս** - «տիեզերքի նվաճման սկիզբը» և այլն,

կյանքի վերջալույս - «մարդու կյանքի վերջին շրջանը, ծերություն», **վերածննդի վերջալույս** - «վերածննդի դարաշրջանի ավարտը՝ 17-18-րդ դարեր», **Եղիսաբեթյան դարաշրջանի վերջալույս** - «Անգլիայի ծաղկուն շրջանի ավարտը՝ 16-17-րդ դարեր» և այլն:

Ժամանականիշ բառերի հոմանշային շարքի բոլոր անդամները համարժեք զուգորդելիություն չունեն գոյական անունների հետ. այդպիսի զուգորդելիությունը պայմանավորված է ժամանականիշ բառերի փոխաբերական իմաստների կապակցելիական ներուճակությամբ:

Այսպես՝ **տիեզերական դարաշրջանի լուսաբաց** // - **այգաբաց** // - **արշալույս** կապակցությունները նշանակում են «տիեզերքի նվաճման սկիզբը, դեպի տիեզերք ելքի սկզբնավորման շրջան»: Հոմանշային շարքի մյուս անդամները, սակայն, զուգորդե-

¹ **Երեկո** և **մայրամուտ** բառերը միևնույն հոմանշային շարքում են. քննության առումով մենք ելակետ ենք ընդունում **մայրամուտ** բառը՝ ելնելով այն հանգամանքից, որ ժամանակային իմաստով **երեկոն** փոխաբերական իմաստ չի արտահայտում, իսկ **մայրամուտն** ունի փոխաբերական լայն կիրառություն:

լիություն չունեն «տիեզերական դարաշրջան» բառակապակցության հետ, ինչպես՝ տիեզերական դարաշրջանի առավոտ // - այգ և այլն:

Նմանապես, մայրամուտ – վերջալույս հոմանշային շարքի որոշ անդամներ զուգորդություն են կազմում **կյանք** բառի հետ, որոշ անդամներ՝ ոչ:

Հմտ. **կյանքի վերջալույս // - արևամուտ // - մայրամուտ**, բայց ոչ՝ **կյանքի երեկո // - իրիկնադեմ // - իրիկնամուտ**¹ և այլն: Հմտ.

Մահվան դեղնությունը պատել էր դեմքը, և սևորակ աչքերի մեջ, որ երբեմն նա բաց էր անում, աղոտ նշույլներով փայլում էր մարած **կյանքի վերջալույսը** (Բ):

-Վերջին սառն է,- հառաչեց վարդապետը,- նվազել է աչացս լույսը, և գիտեմ՝ վաղուց **արևամուտ է թեքվել կենացս արևը** (ԳԴ)²:

Նմանապես, **առավոտ – լուսաբաց** հոմանիշները զուգորդություն են կազմում տարբեր բառերի հետ՝ արտահայտելով «կյանքի նոր շրջանը, մի բանի սկզբնա–վորման շրջանը. բարեհաջող կյանքի շրջան» և այլն: Հմտ.

Գալիս ես, գալիս ես դու ինձ մոտ, Իմ **կյանքի առավոտ** (ԱՍ): Արցախը վտանգվում է սրանց գոյությամբ, որ իրենց, այսպես կոչված, **խաղաղության դարաշրջանի արշալույսին** ավելի շատ զոհեր, գերիներ, տարածքային կորուստներ են լինում, քան մինչ այդ՝ 30 տարիների ընթացքում (News.am/arm/news/696153):

Գերմանացի մաթեմատիկոս Կարլ Հոյնը գրել է առաջին (ընդհանուր) հավա–սարումը դեռ 100 տարի առաջ, և **քվանտային մեխանիկայի արշալույսին** այն կարող էր դառնալ լուրջ ուսումնասիրության առարկա (News.am/arm/news/699428): Մեր պայքարն ավարտվելու է, և Հայաստանի համար **բացվելու է նոր արշալույս** (News.am/arm/news/700029): Սա մի հերթական փորձություն է, որն աներկբա կհաղթահարի ՀՅԴ-ն և **կկերտի** Հայաստանի և Արցախի, Հայոց պետականության **նոր արշալույս** (News.am/arm/news/703164):

Սակայն լեզվում չունենք **կյանքի այգ – կյանքի այգաբաց –կյանքի արևածագ – կյանքի լուսածագ – կյանքի լուսադեմ** կապակցությունները:

Ղալության արշալույս կապակցությունը, ինչպես նշեցինք, նշանակում է «որևէ ազգի գիր ու գրականության սկզբնավորման շրջանը»: Մինչդեռ **լուսաբաց, արևածագ, արևազալ, արևաբաց, այգ, այգաբաց, լուսածագ, լուսադեմ** հոմանշային շարքի անդամները, «մի բանի սկիզբը՝ սկզբնավորումը» նշանակություններով իմաստային զուգորդելիություն չունեն **ղալություն** բառի հետ. հետևաբար լեզվում չկան **ղալության լուսաբաց // - արևածագ // - արևազալ // - արևաբաց // - լուսադեմ** և նման կարգի կապակցություններ:

Ինչպես ցույց է տալիս վերոբերյալ կառույցների բառակապակցական իմաստների քննությունը, հենակետային (չեզոք) միավորները (առավոտ և իրիկուն) և նրանց հոմանշային շարքի անդամները փոխաբերական իմաստներով բացարձակ զուգորդություն չեն կազմում **կյանք** բառի հետ. շարք(եր)ի որոշ անդամներն այդ հարցում

¹ Չեղջման կամ էլլիպսիսի հետևանքով **կյանքի իրիկուն** կապակցությունը փոխաբերական իմաստով հանդես է գալիս **իրիկուն** ձևով՝ «կյանքի ծերության շրջանը» իմաստով: Հմտ. Մոտենում է, քո՛ւյր իմ, ա՛խ, **իրիկունս** միգամած, Ինչպե՛ս, ինչպե՛ս ընդունեմ կյանքի բաժակը քամած, Որ ծեռքերս չդողան, Որ օրերս ներեն ինձ (ԵԶ):

² **Կենաց արևը արևմուտ թեքվել** կապակցությունն ունի դարձվածային արժեք՝ «խոր ծերություն ապրել» իմաստով:

գործառական հաճախականություն են դրսևորում, որոշ անդամներ կապակցություն չեն կազմում:

Ժամանակային հատույթների անվանումները, ըստ օրվա պահերի, միմյանց նկատմամբ ցուցաբերում են ինչպես **հոմանշային**, այնպես էլ **հականշային հարաբերություններ**¹ փոխաբերական իմաստներով հանդերձ: Այսպես, **առավոտ** հենաբառի շարքային անդամները՝ **արշալույս**, **լուսաբաց**, **այգաբաց**, միմյանց նկատմամբ արտահայտում են հոմանշային հարաբերություն, այդպես նաև՝ **իրիկուն** հենակետային բառի շարքային անդամները՝ **մայրամուտ**, **արևամուտ**, **վերջալույս**:

Մյուս կողմից՝ **առավոտ** և **մայրամուտ** հենակետային բառերի շարքերը միմյանց նկատմամբ ցուցաբերում են հականշային հարաբերություններ, ինչպես՝ **արշալույս**, **լուսաբաց**, **այգաբաց** – **իրիկուն**, **մայրամուտ**, **վերջալույս**:

Պետք է նկատի ունենալ, որ բերված շարքերը հոմանշային կամ հականշային հարաբերություններ են արտահայտում ոչ միայն իբրև «Ժամանակային հատույթների» անվանումներ, այլև՝ իբրև «մարդու կյանքի այս կամ այն հատվածը բնութագրող» հասկացություններ: Վերջին (փոխաբերական) իմաստներով այդ անվանումների նկատմամբ հոմանշային և հականշային հարաբերություններ են դրսևորում նաև տարվա եղանակների անվանումները՝ փոխաբերական նշանակություններով:

Լեզվում մակդրային արժեքով հանդես են գալիս նաև տարվա եղանակների անվանումները (**ամառ**, **ծմեռ**, **աշուն**, **գարուն**), որոնց փոխաբերական իմաստները պայմանավորված են մարդու վրա այդ եղանակների թողած զգայական տպավորություններով. **ամառը** փոխաբերաբար արտահայտում է «հասունություն», **ծմեռը**՝ «ծերություն, վախճան, մահ», **աշունը**՝ «բեղուն, բերքառատ հասակ», **գարունը**՝ «երիտասարդություն»¹:

Տարվա եղանակները փոխաբերական իմաստներով զուգորդություն են կազմում **կյանք** բառի հետ, և վերահիմաստավորված կապակցություններն արտահայտում են «մարդու կյանքի այս կամ այն շրջանը»՝ համապատասխանելով տարվա եղանակների փոխաբերական իմաստներին»: Հմմտ.

Կյանքի ամառ – մարդու կյանքի առույգ՝ ուժերի լիակատար հասունության շրջանը:

Կյանքի ծմեռ – ծերություն, մարդու կյանքի վերջին շրջանը:

Կյանքի աշուն – մարդու կյանքի ծանրակշիռ և բեղուն շրջանը:

Կյանքի գարուն – մարդու կյանքի երիտասարդական շրջանը, երիտասարդություն:

Եթե **կյանքի ամառ**, **կյանքի աշուն**, **կյանքի գարուն** կապակցություններն արտահայտում են համեմատաբար մերձավոր նշանակություններ և կարող են դիտվել հոմանիշներ, ապա իմաստով դրանց հակադրվում է **կյանքի ծմեռ** կապակցությունը՝ նախորդների նկատմամբ արտահայտելով հականշային հարաբերություն:

Կյանքիս գարունն է անցել, Ինձ ուշացած է քնար,

Օտար աշխարհի պանդխտիլ Ինձ մնում է վշտահար (ՄՆ):

Գարնանային կենացս մեջ Սիրո ծաղկունք մինչ փրթթին՝

¹ Գրաբարի բառարանները փոխաբերական իմաստով նշում են միայն **ծմեռ** բառը՝ նրան վերագրելով «վիշտ, փորձանք, հուզմունք» նշանակություններ: Հմմտ. Համբեր չարչարանաց, **ի ծմերունս** չարչա–րանաց (ՆՀԲ, 2, էջ 159):

Ափրտըս վառված սիրովն անշեջ Առաքինւոյն և գեղեցկին (ՊԴ):

Նոր ծն ես տալիս քո հին մարմարին, **Կյանքիդ գարունը** քանդակում քարին...(ՎԴ): Այսպես ալ, ո՛վ Եղիա, կըրնաս դուն լավ հասկընալ Թե ա՛հ, ո՛րքան ահեղ է **անցնիլ Կյանքի գարունեն** (ԴՎ): Հասել են **Կյանքիս աշնան** օրերը, Շուտով սև հողին կերթամ ես գերի (ՀԹ): Է՛հ, ծեր կին մը, մայրն, հասած յուր **Կենաց ցուրտ ծմրան**, կրնա՞ր գաղափար ունենալ զգացմանց ջերմության վրա (ՏԿ):

Ինչպես նշեցինք, օրվա հատույթների անվանումները փոխաբերական նշանակություններով տարվա եղանակների անվանումների նկատմամբ դրսևորում են ինչպես հոմանշային, այնպես էլ հականշային հարաբերություններ:

Այսպես, **Կյանքի արշալույս - Կյանքի լուսաբաց** կապակցությունները հոմանշային հարաբերություն են արտահայտում **Կյանքի ամառ - Կյանքի աշուն - Կյանքի գարուն** շարքի հետ: Նմանապես, **Կյանքի մայրամուտ - Կյանքի արևամուտ - Կյանքի վերջալույս** շարքը հոմանշային հարաբերություն է արտահայտում **Կյանքի ծմեռ** կապակցության նկատմամբ: Հականշային հարաբերություն են արտահայտում **Կյանքի ամառ - Կյանքի աշուն - Կյանքի գարուն** շարքը և **Կյանքի ծմեռ** կապակցությունը:

Եզրակացություն

Ժամանականիշ բառերը փոխաբերական կիրառությամբ մակդրային արժեք են ստանում «**Կյանք**» բառի հետ ունեցած զուգորդություններում՝ փոխաբերական իմաստները մասնավորելով մարդու Կյանքի տարբեր շրջանները բնութագրող հատվածների վրա: Ընդ որում՝ ժամանականիշ բառերը (բառաշարքերը) զուգորդելիության տարբեր աստիճաններ են ցուցաբերում. դրանց մի մասը կապակցություն է կազմում «**Կյանք**» բառի հետ, մյուսները զուրկ են այդ դերից և հանդես են գալիս անկախ գործածությամբ:

Ժամանականիշ բառերը (բառաշարքերը) փոխաբերական-մակդրային իմաստներով միմյանց նկատմամբ ցուցաբերում են ինչպես հոմանշային, այնպես էլ հականշային հարաբերություններ. ընդ որում՝ այդ հարաբերությունները դիտարկելի են ինչպես օրվա հատույթների անվանումների շարքերի միջև և դրանց ներսում, այնպես էլ այդ շարքերի և տարվա եղանակների հարաբերակցության ոլորտում:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՍ – Արամայիս Սահակյան

ԳԴ – Գևորգ Դևրիկյան:

ԴՎ – Դանիել Վարուժան:

ԵԶ – Եղիշե Չարենց:

ՀԹ – Հովհաննես Թումանյան:

ՄՆ – Միքայել Նալբանդյան:

ՆՀԲ – Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ. Վենետիկ, 1837:

ՊԴ – Պետրոս Դուրյան:

ՎԴ – Վահագն Դավթյան:

ՏԿ – Տիգրան Կամսարական:

Ր – Րաֆֆի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:
2. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989:
3. Հեքեքյան Ն., **Գիշեր և ցերեկ** բառերի իմաստային վերլուծություն (լեզվամշակութային հայացք), Գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ, Ե., «Ասողիկ», 2017:
4. Стариченок В. Д., Большой лингвистический словарь, Ростов - на - Дону, 2008.

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐՔՅՈՒՐՆԵՐ

1. News.am/arm/news/696153):
2. News.am/arm/news/699428):
3. News.am /arm/ news /700029:
4. News.am /arm/ news /703164:

REFERENCES

1. Jahukyan, G., (1989). Jhamanakakic hayoc lezvi imastabanut'yun & barakazmut'yun (Semantics and Word-Formation of Modern Armenian Language, in Armenian). Yerevan: The Armenian SSR Academy of Sciences Publication.
2. Jahukyan, G., (1987). Hayoc lezvi patmut'yun; nakhagrayin jhamanakashrjan (History of Armenian language; prohistorical period. in Armenian). Yerevan: The Armenian SSR Academy of Sciences Publication.
3. Hekekyan N., (2017). Gisher yev tserek bareri imastayin verlutsut'yun (lezvamsha–00kutabanakan hayatsk), (Semantic Analysis of the Words գիշեր (“night”) and ցերեկ (“day”) in the Linguistic and Cultural Aspects. A Collection of Research Papers. The National Academy of Sciences of the RA, Institute of Language after H. Acharian), Yerevan: Asoghik.
4. Staritshyonok V.D., (2008). Bolshoy lingvisticheskii slovar'. (Large linguistic dictionary, in Russian), Rostov-on-Don.

РЕЗЮМЕ

**Метафорическое значение временных слов и времени года
в современном армянском языке**

Маргуш Мирумян

АГПУ им. Х. Абовяна,

Кафедра родного языка и преподавания его методик,

кандидат педагогических наук, доцент

Ереван, Республика Армения

Временные слова, как наименования временных сечений дня и времен года, имеют метафорические значения, которые реализуются, с одной стороны, в рамках свободного сочетания, с другой - в структурном плане устойчивых словосочетаний.

Метафорические значения временных слов рассматриваются в контексте исследования базовых единиц **утро** и **вечер** и их синонимичных рядов, а метафорические значения названий времен года - в плане семантического соотношения с временными частями дня.

Временные слова приобретают метафорическую значимость в устойчивых сочетаниях со словом **жизнь**, сохраняя исходные метафорические значения, приватизируя их на характеристиках разных периодов жизни человека или общества. При этом слова (ряд слов) демонстрируют разную степень сочетаемости: ср. կյանքի արշալույս // արշալույս (рассвет жизни), կյանքի իրիկուն // վերջալույս (закат жизни) и т.д.

Рассматриваются метафорическое значение времени года по отношению слово **жизнь**, как: կյանքի գարուն (весна жизни), կյանքի ձմեռ (зима жизни) и т.д.

Временные слова проявляют по отношению друг к другу как синонимичные, так и антонимические отношения, при этом эти отношения наблюдаются как между сечением названий дня и внутри них, так и в рамках соотношения этих рядов и названий сезонов года.

Ключевые слова – тематическая группа, временные слова, метафорическое значение, утро, вечер, жизнь, времени года, сочетаемость.

SUMMARY

**Metaphorical Value of Time-Denoting Words and Seasons
in the Modern Armenian**

Mirumyan Margush

AGPU after H. Abovyan

Associate Professor of the Chair of Native Language and Its Teaching Methodology,

Ph.D. in Pedagogical sciences,

Yerevan, Armenia

The time-denoting words, as the names of time sections of the day and seasons, have metaphorical meanings that are realized, on the one hand, within the framework of free combinations, on the other hand, in the structure of fixed word-combinations.

The metaphorical meanings of time-denoting words are considered in the context of the study of the basic units **morning** and **evening** and their synonymous series, and the metaphorical meanings of the names of the seasons - in terms of semantic correlation with the time parts of the day.

Time-denoting words acquire metaphorical significance in fixed-word combinations with the word **life**, keeping the original metaphorical meanings, privatizing them on the characteristics of different periods of a person's or society's life. At the same time, words (a number of words) demonstrate a different degree of compatibility; comp. Այսանքի արշալույս // առաւիժ (sunrise of life; «youth»), կյանքի իրիկուն // վերջալույս (sunset of life; «old ege»), etc.

The metaphorical meaning of the season of the year in relation to the word life is considered, as; կյանքի գարուն (spring of life; «youth»), կյանքի ձմեռ (winter of life; the last round of life) etc.

Time-denoting words show both synonymous and antonymous relations to each other, while they are observed both between the section of the names of the day and within them, as well as within the framework of the correlation of these series and the names of the seasons of the year.

Key words: thematic group, time-denoting words, metaphorical meaning, morning, evening, life, seasons of the year, comparability.